

Վիեննահայ Համայնքի Պատմություն 1938 – 1945

**"Փայլուն ապագայ ունիս, երբ անցեալիդ
գիտակից դառնաս"**

Հանս Լոհրերգեր 1920-1979 (ատրիացի բանաստեղծ)

Իմաստալից ասացուածքի մը համաձայն Բանախօսութիւն մը կը նկատուի "յաջող", երբ այն կարճ տեւած է. լաւագոյն դէպքում (պարագային) Բանախօսութիւնը պէտք է բաղկանայ միայն ներածականէ ու վերջաբանէ:

Իբր ներածական կ'ուզէի նախ իմ խորին յարգանքն ու երախտագիտութիւնը յայտնել հանգուցեալ Եղիշէ ծ. վրդ. Իւթիւճեանին, որ իր 30 տարիներու պաշտօնավարութեան շրջանին բծախնդրօրէն արձանագրած է համայնքի անցուդարձը: Ցավօ՛ք իր տետրակներէն մի քանի հատը անգտանելի են՝ հաւանաբար գոհ գացին կարգ մը անձերու սոցիտութեան կամ անպատասխանատուութեան: Չնայած անոր փրկուած տետրակները կ'ապահովեն դէպքերու ժամանակագրութիւնը, քանզի Իւթիւճեանը բարեբախտաբար անցուդարձը կ'արձանագրէր զուգահեռ՝ մէկը "Յուշատետր", իսկ միւսը "Արձանագրութիւն Հայ Գաղութին ի Վիեննա" խորագրով: Ի դէպ, անարդար նկատած եմ այդ իրողութիւնը, որ վիեննահայ համայնքի մասին հրատարակուած գրքոյկներուն մէջ Տէր Իւթիւճեանի 30 տարւայ ազգօգուտ գործունէութիւնը հազիւ թէ մէկ նախադասութեամբ կ'ամփոփուի:

Ձեզի ցոյց կ'ուզեմ տալ երեք լուսանկարներ ու լսել, թէ որ մէկը ծանօթ է Ձեզի: Անոնք որոնք ցարդ չեն տեսած այս լուսապատկերները, ուրեմն լաւ է, որ այսօրուայ դասախօսութեան ներկայ են:

Մեր այսօրուայ նիւթի ենթաբաժիններն են՝

- Հայկական կեանք ի Վիեննա՝ Ս. Փրկիչ մատուռ, հոգեւոր հովիւր, միութիւններ, Մխիթարեան Միաբանութիւն (das armenische Leben in Wien (St. Salvator Kapelle, der Pfarrer Utudjian, Vereine, Mechitaristen Congregation).
- Հայոց ցեղային ճշգրտութիւնը՝ այսինքն արիականութիւնը (die Frage des Ariertums (die Rassenfrage);
- Հոգաճութիւն՝ հայազգի "Արտերկրեայ աշխատաւորներու (die Betreuung der armenischen „Fremdarbeiter“)
- Հոգաճութիւն՝ հայազգի ռազմական գերիներու (die Betreuung der Kriegsgefangenen armenischer Abstammung)
- Շփումներ՝ հայազգի լեզեռնականներուն (die Kontakte zu den „Armenischen Legionären“)

- Հոգաձուլություն՝ պատերազմի հայազգի փախստականներու (die Betreuung der Kriegsflüchtlinge armenischer Abstammung)

Տարիներ առաջ Վիեննահայոց ուսանողական կեանքի մասին յօդուածներ հրապարակած եմ, նոյնիսկ անգամն ալ այդ մասին դասախօսած: Որպէսզի Ձեր համբերութիւնը չարաչար չգործածեմ, թոուցիկ ակնարկով մը պիտի բաւարարուիմ, ապա բանախօսութեան աւարտին ցոյց պիտի տամ պատմական փաստաթուղթեր ու լուսապատկերներ: Հաւատարիմ այն ասացուածքին, որ կ'ըսէ՝ մէկ պատկեր հաւասար է 100 բառերուն:

Մէկդի դնելով Վիեննահայոց վաղ շրջանը, այսինքն 17-րդ դարի կեսէն մինչեւ 19-րդ դարի վերջը, կ'ուզէի Ձեր ուշադրութեան յանձնել, որ 20-րդ դարու սկզբին Վիեննա կ'ապրէին մօտ 200 հայեր: Ըստ իմ պրպտումներուս այս թիւը կը բաղկանար մօտ 10-15 ընտանիքի անդամներէն, ինչպէս եւ ուսանողներէ ու անհատներէ: Անոնք էին, որ հիմնեցին 1902 թուականին Հայկական Ընկերութիւն "ԱՆԻ" ի Վիեննա, ապա 1908-ին՝ Հ.Բ.Ը.Մ., իսկ 1913 թ.Ս. Փրկիչ մատուոը :

Մասամբ համիտեան ջարդերուն հետեւանքով, մասամբ ալ վաճառականական դրդապատճառներով հաստատուած այս փոքրիկ համայնքի թիւին աւելցան Հայոց ցեղասպանութեան հետեւանքով Թուրքիայէն բախող ընտանիքներ ու անհատներ: Ահա այսպէս կը հիմնուի 1921-ին ուսանողական միութիւն մը, իսկ 1922-ին ալ "Հայ Գաղութային Միութիւն"-ը: Եւ չուշանար եկեղեցական միութիւն մը, որ 1925-ին վերածելով Ս. Փրկիչ մատուոի հիմնադրման յանձնախումբը, կը հիմնէ **"ՎԻԵՆՆԱՅԻ ՀԱՅ-ԼՈՒՍԱԻՈՐՉԱԿԱՆ-ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՇԻՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆՄԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ"**-ը: Այս երկարանուն միութեան շնորհիւ կարելի կը դառնայ 1928-ին Սոֆիայէն բերել Տ. Եղիշէ քինյ. Իրթիւճեանը, որ մինչեւ իր մահը անձնագրի ծառայեց իր համայնքին:

Ուսանողական միութիւնը 1928-ին զանազան պատճառներով իր գործունէութիւնը կը դադրեցնէ: Անոր կը յաջորդէ 1931-ին "Հայ մշակութային երիտասարդաց միութիւնը", որ կը գոյատեւէ փաստօրէն մինչեւ 1940 (ըստ օրէնքի մինչեւ 1948): 1936-ին կը հիմնուի նաեւ "Կանանց Միութիւն" մը: Անոր կը յաջորդէ 1937-ին **"Հայագիտութեան ու հայոց մշակոյթի համակիրներու միութիւն"**-ը, որ "Հանդէս Ամսօրեայ-ի հիմնադրման 50-րդ յոբելեանի առթիւ Միսիթարեան միաբանութեան հովանու տակ կը հիմնուի:

Արիական ցեղի պատկանելիության հարցը

Վիեննահայերը մտահոգությամբ կը հետեւէին Գերմանիոյ 1930- թուականներու քաղաքական անցուդարձին: Յատուկ նշանակութիւն ունէր հայոց Արիական ցեղի պատկանելիութեան հարցը: Այս նիւթը լրջացաւ մանաւանդ 1938 Մարտ 12-ի միաւորումէն (միացումէն) յետոյ, որուն հետեւանքով Աւստրիան կորսնցուց իր անկախութիւնը:

Յիշեցնեմ, որ 1933 թուականին Նացի Կառավարութեան Յեղային հարցերու նախարարութիւնը հայ ազգը դասաւորած էր իբր ոչ-արիական ցեղ: Այս դասաւորման հետեւանքը այդ պիտի ըլլար, որ հայերն ալ հրեաներու նման պատժամիջոցներուն ենթակայ կրնային ըլլալ: Զիս կը հետաքրքրէ, թէ արդեօք այս աննպաստ դասաւորումը օտար կառավարութիւններու քարոզչական աշխատանքով խրախուսուած է, թէ ոչ:

Չնայած անոր, որ Գերմանիա 1933-ին հայազգի հպատակներուն արտօնած էր աշխատիլ պետական-կառավարական հաստատութիւններուն մէջ, սակայն անոնց ցեղային պատկանելիութիւնը յստակ չէր: Շնորհիւ Գերմանոյ-Հայկական Միութեան ու Միխիթարեան Միաբանութեան միասնական աշխատանքին որոշ հասկացողութիւն մը գոյացաւ, սակայն Աւստրիոյ միացումէն յետոյ դեռ պաշտօնական հաստատում մը չկար: Այս նիւթի շուրջ կարելի է կարդալ (Deutsch-Armenische Gesellschaft)-ի պարբերաթերթի մէջ, ուստի կը նախընտրեմ զանց առնել մանրամասնութիւններէ:

Գերմանոյ-Հայկական Միութեան հետ սերտ կապեր ունենալը Վիեննահայ համայնքի համար շատ կարեւոր էր: Այս ուղղությամբ ալ Վիեննահայեր Կ. Յակոբեան, Յակոբ Թարեան եւ Վահան Իսպէշերեանէ բաղկացած մասնաճիւղ մը հիմնեցին:

Հայոց ցեղային պատկանելիութեան հարցը աւելի սաստկացաւ պատերազմի տարիներուն, երբ գերման բանակը գրաւեց Էլբրուզի շրջանը: Գերմանական ու ավստրիական զինականներ հայոց արիականութեան վրայ դեռ կը կասկածէին:

Վիեննաբնակ Դր. Պենդլ սկսաւ վիեննաբնակ հայերէն ոմանց քիթը, զանգն ու մարմինը չափել՝ ի.մ.ա. Լեւոն Սահակեան, Ազատ Վարդեան, Կարպիս Կարապետեան՝ (ծածկանունը՝ քիթ Կարպիս): Երեք շաբաթ անց (13.3.1942) Հայր Իրիւճեան կը գրէ, թէ սեմական ցեղի պատկան այրերու եւ գերման կանանց միջեւ ամուսնութիւններ արգիլուած են:

Այս նորութենէն յետոյ Գերմանոյ-Հայկական Ընկերութեան նախաձեռնությամբ Միւնխենի մէջ տեղի կ'ունենայ բարձր մակարդակի նախարարական ժողով մը:

Մանրամասնությունները մեկդի դնելով ամփոփեմ, որ միայն հայաստանի բնիկ ժողովրդի վրայ կատարուած քննութիւն մը կրնար հայոց արիական ցեղի պատկանելիութեան հարցը լուծել: Գերման բանակի Ստալինկրատի ճակատի ձախողումով (Յունուար-Փետրուար 1943) անուղղակիօրէն այս հարցն ալ ի նպաստ մեզի վերջացաւ:

Վարչական գետնի վրայ սակայն խառն ամուսնութեան հարցը դեռ կը շարունակուի՝ այսպէս կը քաղենք 1943 Մայիս 11-ի ինչպէս եւ 1944 Մայիս 24-ի նշումներէն:

Հայկական Միութիւններ 1938-1945

(Միութեան վարչաձեւի վերափոխումը)

Աւստրիոյ միացումէն քանի մը օր անց, Մարտ 18-ին պաշտօնի կոչուած է Ալբերտ Հոֆմանն անունով յանձնակատար (*kyndhuuap*) մը **sog. Stiko** (Statthaltekommissar für Organisationen, Vereine und Verbände), որուն պարտականութիւնն էր փոխել գործող միութիւններուն, ինչպէս եւ հաստատութիւններուն ու համամիութիւններուն վարչաձեւը եւ ապահովել անոնց գաղափարախօսական հաւասարեցումը՝ երկրի կառավարութեան վարդապետութեան:

Եկեղեցական միութեան („*Armenisch-gregorianisch-orientalischer Kirchenbau- und Kirchengemeindegründungsverein*“) ստուգումը հայոց համար դրական արդիւնք տուաւ (Յունիս 2, 1938), այսինքն կառավարութիւնը մատրան գոյքերը չբռնագրաւեց ու թոյլատրեց օգտագործել Ս. Փրկիչ մատուռը (Յունիս 27, 1938):

Միւս կողմէ, հիմնուելով առկայ օրէնքին, հետեւեալ հայկական միութիւնները արգիլուեցան՝

1.- Հ.Բ.Ը.Մ. Վիեննայի մասնաճիւղը (Allgemeiner Armenischer Wohltätigkeitsverein) 1908 թուականին հիմնուած մասնաճիւղի կանոնադրութիւնը 1910-ին հրատարակուած է գրքոյկի տեսքով՝ տպուած Միսիթարեան Միաբանութեան տպարանին մէջ:

2.- Կանանց Միութիւն („Armenischer Frauenbund“). 1936 թ. հիմնուած այս միութեան մասին ցաւօք սրտի փաստաթուղթեր գրեթէ չկան: Միսիթարեան Միաբանութեան արխիւներուն մէջ հազիւ գտած եմ լուսանկարով օժտուած անդամակցական կոկիկ անձնագիր մը:

3.- Հայագիտութեան ու Հայոց Սշակոյթի Համակիրներու Միութիւն („Gesellschaft der Freunde der armenischen Wissenschaft und Kultur“); Միսիթարեան Միաբանութեան վանքը

իրը նստավայր ունեցող այս միութիւնը հազիւ թէ Դեկտեմբեր 11, 1937 հիմնուած էր: Ան ուներ նաեւ ոչ-հայ, նոյնիսկ ծագումով հրեայ անդամներ:

Գալով 1931 թ. հիմնուած Հայ Երիտասարդաց Մշակութային Միութեան (Kulturbund junger Armenier in Wien)՝ ան չէ արգիլուած, պայմանով որ միութիւնը փոխէ իր կանոնադրութիւնը, ընդունելով այսպէս կոչուած նախագահական վարչաձեւը (Führer-Prinzip): Ըստ այս սկզբունքին նախագահ մը կ'ընտրուի, որ իր կարգին կը նշանակէ իր վարչութեան անդամները: Այս միութիւնը փաստօրէն գործած է մինչեւ 1940, սակայն ի պաշտօնէ լուծուած է նոր կառավարութեան կողմէ՝ հազիւ թէ 1948-ին:

Այս միութեան մասին 1985 ին Աւստրո-Հայկական Մշակութային Ընկերութեան պարբերաթերթի մէջ յօդուած մը գրած եմ: Այս պատճառով պիտի կենդրոնանամ 1938-1940 թուականներու գործունէութեան:

Պատմութեան տեսակիւնէն թերեւս հետաքրքրական է իմանալ, թէ ինչպիսի՞ փոփոխութիւններ կը պահանջուէր միութեան վարչաձեւը փոխելու գծով: Այսօրուայ բանախօսութեան համար սակայն կը նախընտրեմ զանց առնել այս մանրամասնութիւններէն: Կը բաւէ նշել, թէ հրեաներուն անդամակցութիւնը արգիլուած էր:

Միութիւնը իր հիմնադրման օրերուն (1931) ուներ մօտ 30 անդամ: Բազմաթիւ թէյասեղաններ, պտոյտներ ու բանախօսութիւններ կազմակերպուած են: 1933-1938 թուականներուն միութիւնը ուներ 36 հոգինոց երգչախումբ մը՝ ղեկավարութեամբ պարիտոն Ղազարոս Ստեփան Զատէյեանի: Հայ անդամներուն թիւը կը հասնէր 8-ի:

Յայտագրէ մը կը տեղեկանանք, որ 3.6.1939 Ուրանիոյ սրահին մէջ տեղի ունեցած է երաժշտական երեկոյ մը: Դասախօսութիւնները նիւթ ունէին հայոց պատմութիւնն ու մշակոյթը, հազուադէպ նաեւ հայկական խնդիրը: Բանախօսներն էին՝ Տէր Եղիշէ Իւթիճեան, Միխիթարեան Աբբահայր Մեսրոպ Արք.Եպս. Հապոզեան, Հայր Ներսէս վրդ. Ակիմեան, Հայր Ալֆրետ Գարամանլեան, Հ. Անդրէաս Խերլկեան, Հայր Պօղոս Էսապալեան, Դր. Տէր-Մովսէսեան, Տիկին Հ. Վինկլեր, Դր. Պաուլ Ռոհրբախ:

Երիտասարդաց միութեան յարաբերութիւնները Միխիթարեան Միաբանութեան ինչպէս եւ առաքելական եկեղեցական համայնքի հետ շատ լաւ էին: Յաւօք 2-րդ Համաշխարհային պատերազմի սկսումով ոմանք գերման բանակին զօրակոչուեցան, ուրիշներ արտագաղթեցին ու այսպէս գործունէութիւնը գրեթէ կանգ առաւ:

Հայ Ակադեմական Միութիւն 1860՝ Վիեննայի Մասնաճիւղ

Այս միութեան կենտրոնը հիմնուած էր 1860-ին Լայպցիգի մէջ: Մի քանի ընդհատումներէն յետոյ այն կը գործէ մինչեւ այսօր: Այս միութեան մասին եւս հակիրճ տեղեկութիւններ հրապարակած եմ Ա.Հ.Մ.Ը. պարբերաթերթի թիւ 4-ի մէջ (1986): Այժմ կը ջանամ ամփոփել սոյն յօդուածը:

Միութեան խորհրդանիշը հայոց ազգային եռագոյն դրօշակն էր: Գերմանիոյ միութեան նպատակն էր ամէն ձեւով օգնել հայոց՝ մանաւանդ իբր թարգման նորեկներուն եւ անոնց գործ փնտռելու գծով: Վիեննայի մասնաճիւղը հիմնուած է 1941-ին, հաւանաբար 1940 իր գործունէութիւնը դադրեցնող Հայ Երիտասարդաց Մշակութային Միութեան փոխարէն: Շեշտեմ, որ Վիեննայի մասնաճիւղը պաշտօնապէս գրանցուած միութիւն մը չէր եւ ունէր մօտ 20 անդամներ: (Բոլորիս ծանօթ Պրն. Կարպիս Փափագեանը, Ինչպէս եւ Պրոֆ. Վահագն Տատրեանը այս միութեան անդամներն էին):

Հ. Իւթիւճեանի յուշատետրերուն միջոցով կատարած պրպտումներս ի յայտ բերին, որ միութեան վարչութիւնը կանոնաւորապէս ժողովներ կը գումարէր, որոնց ատենագրութիւնները միութեան լուծումէն յետոյ յանձնուած են Եկեղեցական Միութեան: Ցաւալի է, որ անոնք անվերադարձ կորսուած են:

Միութեան գլխաւոր գործունէութիւնը կը բաղկանար սովետական բանակէն գերի առնուած հայ զինուորներուն դեղորայք ու գրպանի դրամ հայթայթելէ: Ասոր կողքին եղած են դասախօսական եւ վիճաբանական երեկոներ: Նշեմ որ, 1942 Ապրիլ 24-ը Վիեննայի մէջ յատուկ երեկոյ մը կազմակերպուած է՝ ի տարբերութիւն այդ աւանդութեան, որով համայնքը այդ օրը միայն հոգեհանգիստով մը կը յիշէր: Իբր դասախօս կամ բանախօսներ կը յիշուին հետեւեալ անունները՝ Դր. Ալֆրեդ Գարամանլեան (31.1.1943-ին Հայոց արիականութեան մասին) Պետրոս Լամբաճեան (27.2.1943), Պրն. Կարապետեան (6.3.1943 արեւելահայ գրողներու մասին), Կարօ Տողրամաճեան (27.3.1943 հայոց պատմութեան մասին)

Հ. Եղիշէ Իւթիւճեան կը յիշէ նաեւ ուսանողաց կազմակերպած Վարդանանք տօնակատարութիւնը (17.2.1944 թ.) ուր բանախօսած են Միւիթարեան Հ. Պօղոս Վրդ. Էսապալեանը (համալսարանի դոցենտ), Դր. Ալֆրետ Գարամանլեանը ու Պետրոս Լամպաճեանը:

Տեսնելով, որ սփիւռքահայ կարգ մը ուսանողներ իրենց խոստացուած կրթաթոշակները կանոնաւորապէս չեն ստանար, որոշուած է 1943-ին կազմել հիմնադրամ մը, ուրկէ կարելի էր որոշ գումար մը վերցնել. Փոխ առնուած գումարի վերադարձի մասնավճարները ուսանողները իրենք կ'որոշէին: Հ. Իւթիւճեան դեռ Սեպտեմբեր 1944 կը յիշէ այս դրամագլխի գոյութիւնը:

Համաշխարհային պատերազմի վերջաւորութեան սփիւռքահայ ուսանողներ մասամբ կը վերադառնան իրենց ծննդավայրը, մասամբ ալ կը գաղթեն այլ երկիրներ:

Ծագումով հայ գործաւորներ (“Fremdarbeiter”) եւ գերեվարուած աշխատաւորներ (Zwangsarbeiter)՝ (1941-1945)

Բ. Համաշխարհային պատերազմի սկսումով Գերմանիան արագացուց իր ռազմական արտադրությունը, ուր սակայն աշխատատեղերում պակասը զգալի էր: Որչափ ալ սկզբնական շրջանին միջազգային պայմանագրերով կարգ մը երկիրներէն օրինաւոր գործավորներ եկած էին (օրինակ Սլովակիա, Իտալիա, իսկ Յուկոսլաւիա՝ միայն գիւղատնտեսութեան համար), դրութիւնը կը սաստկանայ Լեհաստանի ամբողջութեամբ գրաւումով: Նացի կառավարութիւնը որոշեց գրաւուած երկիրներէն գործատուներ բռնի վերցնել ու ձրի աշխատցնել՝ թէ՛ ռազմական եւ թէ՛ գիւղատնտեսական մարզերու մէջ:

Համաձայն նացիական գաղափարախօսութեան օտար աշխատատեղերուն հանդէպ խտրականութիւն կը գործածուէր: Եւրոպայի արեւմտեան երկիրներու հպատակները որոշ մենաշնորհներ կը ստանային, երբ Հունգարացիք, Հարաւսլավիացիք ու Սովետացիք ամենավատ օթեւանն ու նուազ ուտելիք ստանալէ զատ կ'ենթարկուէին նաեւ տեղացի բնակչութեան հանդէպ ընկերային կողիացման: Առօրեայ կեանքը այս վերջիններուն համար կը դառնար վերապրման պայքարի:

Հ. Իւթիւճեան առաջին անգամ Հոկտեմբեր 1941-ին կը յիշէ եօթը հայազգի օտարերկրեայ գործատուներուն մասին, որոնք ներկայ եղած են կիրակնօրեայ պատարագին: Յաջորդ նշումը Փետրուար 22, 1942 թուականին է, ուր կը գրէ, թէ Ֆրանսայէն դեռ ուրիշ հայ գործատուներ ալ գալու են:

Մարտ 29, 1942-ին Սալոնիկէն առաջին երկու հայ գործատուներ կ'այցելեն Ս. Փրկիչ մատուռը: Շափաթական հերթով անոնց կը յաջորդեն նոր կարաւաններ: 89-հոգինոց մեքենագիր անուանացանկ մը կը պարունակէ յունահայ գործատուներու ծննդավայրն ու զբաղմունքը:

Աշխատանքի պայմանները ցաւօք շատ ծանր էին: Դժգոհ գործատուներ կը ջանային աշխատավայրը փոխել, որուն համար նոյնիսկ գործէն կը փախէին, մասամբ ալ ապօրէն գործերով կը զբաղուէին (Քրոնիկ 13. Ապրիլ 1942): Մայիս 25-ին Հ. Իւթիւճեան յունահայ աշխատատեղերուն հետ Կահիլենբերգ պտոյտի կ'երթայ: Տէր Հայրը ոչ միայն կը ջանար անոնց նոր գործ մը ճարել, նաեւ ոստիկանութեան քով միջամտելով երբեմն կը յաջողէր զանոնք ազատել բանտէն:

Ազատ ժամերուն հայազգի աշխատատեղերը բացի մարզանքէն (ոտնագնդակ) կը զբաղուէին նաեւ ազգային մշակոյթով՝ Պետրոս Դուրեանի, Գրիգոր Լուսաւորիչի, Սահակ-Մեսրոպի, հայոց հեթանոսական կրօնի, նաեւ Հայաստանի աշխարհագրական դիրքի մասին բանախօսութիւններ տեղի կ'ունենան: Անոնցմէ մէկուն, 1942 թ. Յուլիս 12 ին գերմանիայէն ներկայ է Յուլաք Տէր-Յարութիւնեան, որ կ'արտայայտուի հայազգի ռազմագերիներուն մասին:

1942 թ. Օգոստոսին բուլղարահայ գործատուներ իրենց Գերմանիոյ ճամբուն Վիեննա կը հասնին եւ կ'այցելեն Ս. Փրկիչ մատուռը: Այցելուներէն Գրիգոր Ալաճաճեան աւելի ուշ ԱԲԱՇ թերթի մէջ յօդուած մը գրած ու յիշած է, որ Գերմանիոյ մէջ շատ մը երկիրներէ բազմաթիւ հայեր կը գտնուին, իսկ Վիեննայի մասին կու տայ անոնց թիւը 600-ով:

Բազմաթիւ գործաւորներու ներկայութիւնը կիրակնօրեայ պատարագներու կատարումը կը խանգարէր: Հազիւ 200 հոգի հաշուող համայնքի անդամները ոչ միայն գործաւորներու աղմուկէն ու անկարգութենէն, այլեւ անոնց քաղաքական դիրքորոշումէն կը դժգոհէին: Որոշ ժամանակ Ս. Պատարագ տեղի չէ ունեցած: Յանկի մը համաձայն 1942 – 1944 թուականներուն 328 հայազգի գործաւորներ արձանագրուած էին:

1943 Ապրիլ 25-ի պատարագին ոստիկանութիւնը կ'այցելէ մատուռ: 1930 թ. հռչակուած ոստիկանական կարգադրութեան համաձայն ներկաներու թիւը կը սահմանուի 30-ով:

Տուրպուլի խումբը կը մրցէր Հ.Ս. Ը. Մ.ի անունով: Համազգեստը կարմիր-կապոյտ գոյներէ կը բաղկանար: Մարզիկները կը խաղային 19-րդ թաղամասի Հայլիզենշդադի մարզադաշտը: Աւելի ուշ որոշուեցաւ ակումբը վերածել միութեան մը, պահանջելով կանոնաւոր անդամավճար: Ասկէ զատ, նախատեսուած երգչախումբի մը կազմութիւնը ցաւալիօրէն կը ձախողի:

Հայազգի գործաւորներուն համար շատ կարեւոր թուական մը կը նկատուի 1943 թ. Մայիս 8-ը: Այլեւս անոնք OST գրուած բազկաժապաւէն պիտի չկրէին:

Գործաւորներու ձեռնարկներն ու ժողովները ընդհանրապէս մատրան մէջ տեղի կ'ունենար, երբեմն ալ Միխիթարեան վանքը, ուր մեծ թուով հանդիսատեսներ կրնային ներկայ ըլլալ: Այնպիսի ձեռնարկ մըն էր 1944 թուի Մայիս 28-ի տօնը, որուն ներկայ էին ու խօսեցան զօրավար Դրօն, դաշնակցական Գեւորգ Կարվարենց ու Խոսրով Ներսէսեանը:

Եթէ ամփոփել ուզեն հայազգի գործաւորներու օգնութեան մասին Տէր Հայրի ու անոր դուստր Ատրիինէի տարած աշխատանքը, կրնամ յիշել՝

- 1.- Աննպաստ աշխատանք ունեցողներուն նպաստաւոր գործ գտնալ, իսկ նորեկներուն իրենց նախընտրած գործը ճարել:
- 2.- Հիւանդներուն ընկերանալ բժիշկներու այցելութեան;
- 3.- Մնունդի կտրօսներու հայթայթում
- 4.- Հիւրասիրութիւն ու միխիթարութիւն կարգ մը թշուարներուն;
- 5.- Միջամտութիւն գաղտնի ոստիկանութեան (այսինքն Կեստաթօ / Գեստապոյ) քով՝ որճրագործ աշխատաւորները (օրինակ սնունդի գողութիւն, սեւ շուկայ) կամ անկարգ հայերը փրկելու համար, նաեւ թարգմանութիւն անոնց դատաւորութեան պահին:
- 6.- Միասնաբար ճաշ ու զբօսանք;
- 7.- Վերադառնալու մտադիր սակայն միջոցագուրկ գործաւորներուն համար յատուկ հանգանակութիւն
- 8.- Վարձու բնակարանի որոնում

9.- Միջամտութիւն գործատերերուն քով, որպէսզի հայ գործաւորը կարողանայ անցնել արձակուրդը իր ընտանեկան միջավայրին մէջ:

10.- Արիական փաստաթուղթի պատրաստում:

Հայր Իթիւճեան եւ հայկական կեանքը ի Վիեննա

Շնորհիւ Հ. Իթիւճեանի յիշատակագրութեանց կարելի եղաւ բաւականին ընդարձակ տեղեկութիւններ ստանալ՝ մանաւանդ 1938-1945 շրջանի մասին:

Բացի իր հոգեւորական սովորական պարտականութիւններէն (Ս. Պատարագ, Հոգեհանգիստ, Մկրտութիւն, Ամուսնութիւն, Թաղում, Տնօրինէք, Հիւանդտես), Հ. Իթիւճեան սիրով կը դասաւանդէր հայերէն լեզուն, թէ՛ երեխաներուն, թէ՛ չափահասներուն՝ նոյնիսկ ոչ-հայերուն:

Հ. Իթիւճեան ոչ միայն եկեղեցական տօներուն առթիւ մշակութային կոկիկ ձեռնարկներ կը մշակէր (Փետրուարին՝ "Վարդանանց Տօնը", Ապրիլին՝ Ցեղասպանութեան Սգահանդէսը, Յուլիսին՝ Սուրբ Սահակ-Մեսրոպի օրը, Հոկտեմբերին՝ Թարգմանչաց Տօնը կը "Մշակոյթի Օր") , նաեւ իր մասնակցութիւնը կը բերէր գործող հայ երիտասարդական միութեան („Kulturbund junger Armenier“) աշխատանքներուն: Իր դուստրը Ատրինէն ալ իր նուագով կը սատարէր հօրը ձեռնարկներուն յաջողութեան:

Հ. Իթիւճեան ուշադրութեամբ կը հետեւէր նաեւ ոչ-հայ գիտնականներուն գործունէութեան: Կը յիշէ 1939 թ. Մարտ 15-ի հայկական մշակոյթի մասին, դասախօսութիւնը գոր տուած էր Ազգային Թանգարանի տնօրէնը՝ Ուրանիոյ սրահի մէջ: Հ. Իթիւճեան կը յիշէ նաեւ իր այցը այրի տիկին Շտրցիկովսկի՝ 1941, Յունուար 9-ին:

12 Յունիս 1940 Տիգրան Փափագեան կ'ընտրուի համայնքի ատենապետ՝ գանձապահն է Աւետիս Չերչեան: 1938 – 1945 շրջանին թիւով 20 անհատներ ստանցնած են եկեղեցական վարչութեան ու հաշուեքննութեան պաշտօններ: Անոնց ցանկը դասախօսութեանս գերմաներէն տարբերակի մէջ արտատպած եմ:

Չնայած սահամանափակ տարածութեան Ս. Փրկիչ մատրան Ս. Պատարագի երգեցողութիւնը կը ճոխանար երգչախումբի մասնակցութեամբ: 1940 թ. Նոյեմբեր 10-ին կը հիմնուի աղջկանց երգչախումբ մը՝ բաղկացած Վիեննայի եւ Համբուրգի աղջիկներէն: Ցաւօք կը պակսին մանրամասնութիւններ՝ մասնակիցներու թիւի եւ երկչախումբի գոյատեւման մասին:

Եկեղեցական վարչութիւնը պարտաւոր էր յիշելու Ֆիւրեր-ի ծննդեան տարեդարձը ու շնորհաւորել զինք ամէն տարի Ապրիլ 19-ին:

Հ. Իրթիւճեան կը յիշէ նաեւ , որ 12.2.1942-ին տեղի ունեցող Վարդանանց Տօնին մասնակցած էր նաեւ Գերմանիա ապրող գեղանկարիչ Սերուկեանը, որուն "Անիի Աւերակները" ստեղծագործութիւնը աճուրդի դրուեցաւ:

Զմոռնամ նաեւ յիշելու, որ Հ. Իրթիւճեան ունէր բանաստեղծական տաղանդ: Վերոյիշուած տօնակատարութիւններու ընթացքին ան կը կարդար իր յօրինած ոտանաւորներէն մին:

Հ. Իրթիւճեան կանոնաւորապէս կը նոթագրէր նաեւ մատուցած պատարագները: 1943-ի Ս. Ծննդեան խթման արարողութիւնը կը կատարէ գերմանական բողոքականներու եկեղեցին՝ հոժ բազմութեան մը ներկայութեան: Այդ օրը իր դուտը՝ Ատրինէն կը ղեկավարէ երգչախումբը: Նաեւ սուրբծննդեան Պատարագը տեղի կ'ունենայ նոյն եկեղեցիին մէջ: (նաեւ տարի մը յետոյ, Ս. Ծննդեան պատարագը կը մատուցուի նոյն եկեղեցիին մէջ): Յաւարտ Ս. Պատարագին Արմենակ Վարդեան քանի մը հայ գործաւորներ կը հրաւիրէ Հիւբներս Կուրսալոն: Լեւոն Սահակեան եւս հոգ կը տանի հայ աշխատաւորներուն, որոնցմէ 8 հոգի կը հրաւիրէ Մարտ 2-ին ընթրիքի մը:

Իսկ ջրօրինէքի պատարագը տեղի կ'ունենայ Լինց քաղաքը՝ գորգավաճառ Պարոն Վահրամ Երեմեանի խանութին մէջ՝ ներկայութեամբ 16 հայ գործաւորներու:

ԱՐԱՇ թերթի 7. Ապրիլ 1943 թիւի մէջ Վիեննահայոց մասին յօդուած մը լոյս կը տեսնէ, ուր Հ. Իրթիւճեանի ու իր դուստրի մասին գովասանքներ կան: Յօդուածի հեղինակը կը յիշէ, թէ ներկայիս մօտ 600 հայազգի գործաւորներ Վիեննա կը գտնուին: Քննադատելով տեղացի հայերուն անտարբերութիւնը, գործաւորները հոգեւոր հովիւի օգնութեամբ կազմած են միութիւն մը: Խիստ հետաքրքրական է նոթագրութեան մէջ կարդալ հայ ռազմագերիներու սեղանի մը մասին՝ Պրատերի ճաշարաններուն մէկու մը մէջ, ուր անոնք կը զուարճանային ասմունք, երգ ու պարով:

Հայ գործաւորները զանազան առիթներով մատրան մէջ կը ճառախօսէին: Հաւանաբար որոշներ կ'ընէին նաեւ քաղաքական քարոզչութիւն, բան մը որ եկեղեցական վարչութեան քննադատութեան առիթ կու տար: Վարչութեան ատենապետ Յարութիւն Յակոբեան (Արթին Ակոբեան) հոգեւոր հովիւէն կը խնդրէ, որպէսզի ան նման ճառախօսութիւններու նիւթը նախապէս ներդաշնակէ գործաւորներուն հետ:

1943-ի Յունիս եւ Յուլիս ամիսներուն Տէր Հայրը կը ճամբորդէ դէպի Լեհաստան: Այս մասին կը խօսիմ քիչ յետոյ՝ " Հայկական Լեզեոններու" բաժնին: Հետաքրքրական է, որ օրիորդ Էօժէնի Զատէյեանի ու Վահէ Էդիազարեանի Յուլիս 31-ի ամունութեան խաչեղբայրն էր Միքայէլ Տէր-Պօղոսեան անունով հայ լեզիոնար մը:

Հ. Իրթիւճեանի այցելութիւնը Գերմանիա (1943 թ., Օգոստոս 4-էն 13)

Իր դուստր Ատրինէին հետ Տէր Հայրը կը ճամբորդէ Գերմանիա՝ այցելելու հայազգի գործաւորները: Շտուտգարտէն յետոյ կ'անցնի Տիւբինգէն, ապա Միւնխէն:

Հ. Իւթիւճեանի այցելութիւնը Բուդապէշտ (1943 թ. Օգոստոս 16-էն 26)

24 Սեպտեմբեր 1943 Բեռլինէն կը ժամանեն նորապսակեալ Շահէն (Տէր) Յարութիւնեան, որոնց կ'ընկերանար գեղանկարիչ Դերվիշը (Անդրէաս Սեվրուկեան)՝ իր կնոջ հետ:

1943-ի վերջերը "Հայասէր Լեզիոնար" ծածկանունի տակ լոյս տեսած գրութեան մը համաձայն Օրիորդ Ատրինէ Իւթիւճեանի ղեկավարած երգչախումբը մօտ քսան անդամներէ կը բաղկանայ:

1944 թուականը Տէր Հայրին համար տխուր տարի մը կ'ըլլայ՝ դուստրը Ատրինէն կը մեկնի դէպի Աթէնք, ուր Ապրիլ 16-ին կ'ամուսնանայ Օննիկ Փալանճեանի հետ: Իսկ Սեպտեմբեր 26-ին կը մահանայ երեցկիւնը: Թաղման արարողութիւնը յանձն կ'առնէ Բեռլին պաշտօնավարող վրդ. Շահլամեանը:

Տէր Հօր փոքր բնակարանը ծառայած է նոյնիսկ իբր ապաստան՝ Մարտ 23-ին Աւետիքեան ընտանիքի չորս անդամները 12 օրեր շարունակ հոն կը գիշերեն:

Յուլիս 16-ին Վիեննան անաջին անգամ պատարագի մը ընթացքին կը ոմբակոծուի: Երգչախումբը քաջաբար կը շարունակէ երգել: Երկու ռումբեր կը վնասեն Տիկին Գարագոչի Դեօրինգի մայրուղիի թիւ 70 շէնքն ու բաղնիքը: Նաեւ կը վնասուին Կարպիս Կարապետեանի ("քիթ" Կարպիս) սենեակը եւ Արմենակ Վարդեանի բնակարանը:

Երգչախումբի փորձերը չնայած ծանր կացութեան կը շարունակուին: Ռմբակոծութեան պատճառով Տէր Հայրը Սեպտեմբեր 10-ի Ս. Պատարգը կ'ընդհատէ: Քաղաքի կենտրոնը ծանր վնասներ կը կրէ: Մի քանի հայեր կը մեռնին, ոմանք ալ քաղաքէն կը հեռանան:

ՀՅԴ Աւատրիա 1938-1945

Պատերազմի շրջանին կարգ մը ՀՅԴ գործիչներ կ'այցելեն Վիեննա՝ առանց քաղաքական յատուկ առաքելութեան: Բացառութիւն կը կազմէ Զօրավար Նժդեհը (Գարեգին Տէր-Յարութիւնեան), որուն 1935 թ. հիմնած ցեղակրօն շարժումը կը նկատուէր ոչ-դաշնակցական ծրագիր: Այս պատճառով ալ, ԿԿ զինքը կախակայած էր, սակայն կուսակցութենէ չէր վտարած:

Հայաստանը համայնավար կարգավիճակէն (վարչաձեւէն) ազատելու նպատակով 1935-ին Նժդեհ Բուլգարիա, Ռումանիա, Յունաստան ապա ԱՄՆ հայ երիտասարդութիւնը իր շուրջը հաւաքեց: Շեշտեմ, որ կարգ մը նախկին դաշնակցականներ կը համակրէին Յեղակրօն շարժման, եւ այս պատճառով ալ հեռացան կուսակցութենէն:

Պատերազմի շրջանին Ցեղակրոն շարժման գործունեությունը կենտրոնացավ Հայկական Լեգիոնական շարժումին վրայ. այս մասին աւելի ուշ:

Յուլաք Տեր-Յարութիւնեանի պատմածի վրայ ՀՅԴ Նացի կառավարութեան արտաքին գործոց նախարարութեան հետ շփում ստեղծած է՝ զօրավար Արշակ Ճեմալեանի միջոցով: Բ. Համաշխարհային պատերազմի սկսելէն քանի մը շաբաթներ առաջ ան կը մահանայ: Իրեն կը յաջորդէ Վահան Փափազեանը (այլապէս՝ Գոմս), որ հակառակ իր հակակրանքի, կը համագործակցի Նացի կառավարութեան հետ: Իսկ դաշնակցական յայտնի դէմքերէն Ջօրավար Դրօն (Դրաստամատ Մարտիրոս Կանայեան) կը համագործակցէր ուղղակի Գերման բանակի դիմադրական բաժնի հետ: Այսինքն Դրոն ուներ ոչ մի կապ հայկական Լեգեոնականներուն հետ:

ՀՅԴ-ը պատերազմի շրջանին հակասովետական դիրք չէ առած, այլ ուզած է ամէն գնով օգնել հայ գերիներուն՝ հոգալու անոնց պէտքերը, ինչպէս եւ նուազեցնելու վիրաւորներու ցաւերը: Կը պատմուի, թէ ՀՅԴ ղեկավարները կարողացած են համոզելու գերման բանակի ղեկավարութիւնը, որ հայ ռազմագերիները անվստահելի են սովետական բանակին դէմ կռուելու, ուստի նախընտրելի է անոնք լիովին տեղափոխել արեւմուտքի ճակատ՝ Ատլանտիկ:

1940 թ. Սեպտեմբեր 30-ին ՀՅԴ խումբ մը կ'այցելի Վիեննա՝ առաջնորդութեամբ Դրօ-ի: Խումբի միւս անդամներն էին Փարիզէն երիտասարդ Ճամալեան, Ռոմանիայէն Պրն. Արարատեան, Բեռլինէն Դաւիթ Դաւիթխանեան ու Բաբաճանեան: Դրօն 10 օր մնաց Վիեննա: Եկեղեցական վարչութեան անդամներէն Պարոն Գեղամ Ամատունի զինք հիւրասիրեց: Կ'ըսուի, թէ Դրօի այցելութիւնը պաշտօնական հանգամանք չունէր:

Հ. Իւթիւճեանի յուշատետրէն կը քաղենք, որ Մայիս 24, 1942 թ. Ս. Պատարագի աւարտին վէճ մը կը ծագի Մայիս 28-ի տօնակատարութեան շուրջ՝ Կարօ (Կարպիս) Փափազեանի ու եկեղեցական վարչութեան անդամներու միջեւ: Քանի որ, Հ. Իւթիւճեան իր ժամանակագրութեան մէջ այս մասին այլեւս չէ նոթագրած, փաստօրէն այդ տօնակատարութիւնը տեղի չէ ունեցած մատրան մէջ:

1942 թ. Նոյեմբեր 17-ին ՀՅԴ գործիչ Յունաստանէն Արշակ Ենովքեան Վիեննա կը հասնի, հաւանաբար Բեռլին տեղի ունենալիք ժողովի մը մասնակցելու համար: Սոյն ժողովին նախատեսուած է մասնակցութիւնը Գերմանացիներու կողմէ գրաւուած երկիրներու ներկայացուցիչներու (այսինքն Բուլգարիա, Ռոմանիա, Յունաստան, Ֆրանսա, իսկ Գերմանիան՝ իբր հիւրընկալ ու կազմակերպիչ երկիր):

1943 թ. Սեպտեմբեր 23-ի գրանցումով կը տեղեկանանք, որ 20-25 դաշնակցական շարքայիններ ու համակիրներ Մկրտիչ Փափազեանի հետ յաճախ կը տեսնուին: Մ. Փափազեանը ՀՅԴ Յունաստանի աչքառու գործիչներէն մէկն էր, որ գերմանացիներու նահանջքի ժամանակ յոյն համայնավարներու կողմէ սպաննուած էր:

1943 թ. Դեկտեմբերին կաթոլիկ Ս. Ծննդեան շրջանին Յունաստանէն ընտանեօք Վիեննա կը ժամանէ ՀՅԴ գործիչ Գեորգ Կարվարենց: Ամսուն 25-ին Միխիթարեաններու վանքի մէջ կը ճառախօսէ, որուն Հ. Իւթիւճեան ներկայ կը գտնուի: Գեորգ Կարվարենց ու ընտանիքը կը մնան Վիեննա մինչեւ պատերազմի դադարին, ապա կը մեկնին Վենետիկ:

9 Մարտ 1944 ին Բեռլինէն Վիեննա կու գան Վահան Փափագեան ("Կոմս"), Սուրէն Սահարունի, Գեորգ Կարվարենց եւ (Յոլաք) Տէր-Յարութիւնեան : Ծաղկազարդի պատարագին կը մասնակցին, ուր հոգեհանգիստ մը տեղի կ'ունենայ Աթենքի մէջ մահացած ուսուցիչ Արսէն Բալեանի համար:

Հոգեւոր հովիւը կը լսէ, թէ Միխիթարեանց պարտէզը դաշնակցականներու ժամադրավայրի վերածուած է, ինչպէս նաեւ նկարիչ Սեւրուկեանի բնակարանը: Զարեհ Չոփուրեանի միջոցով Տէր Հայրը կը տեղեկանայ, որ զօրավար Դրօն դէպի Վիեննա ճանապարհին է, իսկ կիներ հաւանաբար նախապէս Վիեննա ժամանած է:

Համբարձման տօնին քանի մը ծանօթ դէմքեր Ս. Պատարագին ներկայ կ'ըլլան. ի. մ. ա. Դրոյին կիներ: Դաշնակցականներու գործունէութիւնն ու վարմունքը համայնքի համակրանքը կը նուազացնէ: 28 Մայիսի տօնակատարութիւնը պարտաւորուած Միխիթարեան Միաբանութեան քով տեղի կ'ունենայ, որուն Հայր Իւթիւճեանն ու համայնքի անդամները կը բացակային:

Զօրավար Դրօն Վիեննա կը մնայ քանի մը օրեր. 7 Յունիս 1944-ին Դրօն ներկայ է Վահան Իսպէչերեան ընտանիքի հիւրասիրութեան:

Պարզ թուղթի մը վրայ Տէրհայրի առած նոթագրութենէն կը տեղեկանանք, որ Զօրավար Դրօն 19 դեկտեմբեր 1944-ին (դարձեալ) Վիեննա ժամանած է:

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԷՈՆ

Նախ եւ առաջ պարտք է հաստատել, թէ Աւստրիոյ հայ համայնքէն ոչ մէկ անձ սովետական բանակի դէմ կռուած է: Վիեննաբնակ չորս աստրիաւապատակ հայ երիտասարդներ զօրակոչուած էին՝ Եղուարդ Փափագեան, Հրանդ Զատէյեան, Արամ Ծերունեան եւ Պետրոս Կամսարական: Առաջին երկուքը լեզեոնականներուն կը ծառայէին իբրեւ թարգման. Արամը Բուլգարիա ծառայեց իբր թարգման եւ սուրհանդակ (լրաբեր) իսկ Պետրոսը կը գործէր "անվտանգութեան ծառայութեան" մէջ:

Հրանդ Զատէյեանի քոյրը՝ Էօժենի Եղիազարեան պատմեց, թէ եղբայրը թունաւորուած է Ֆրանսա տեղափոխուող հայ լեզեոնականներու կողմէ ու մահացած է 1944 թ. Օգոստոս 24-ին՝ Ֆրայբուրգի հիւանդանոցի մէջ: Հրանդի թաղումը տեղի ունեցած է Վիեննա Սեպտեմբեր 4-ին:

Յիշեալ չորս զինուորներէն զատ կային քաղաքացիներ, որոնք կ'աշխատէին կառավարական-վարչական հաստատութիւններուն մէջ, օրինակի համար գրաքննութեան գրասենեակի մէջ Տիկին Մելինէ եւ Տիկին Մելիքսեթեան, իսկ Ազատ եւ Ժիրայր Վարդեաններ՝ իբրեւ բեռնատարային վարորդներ:

1942 թուականի կէսերին ստեղծուած հայկական լեգէոններէն առաջ կային նաեւ ֆրանսական բանակի հայ զինուորներ, որոնք գերի բռնուած էին գերմանացիներուն կողմէ ու բերուած Կայզերշտայնբրուխ (Kaisersteinbruch): Տերհայրը կ'արձանագրէ 14 Փետրուար 1941-ին իր այցը Վեհրկրայսկոմանդօ (Wehrkreiskommando): Ֆրանսահայ ռազմագերիները հոն կը մնան մինչեւ 3 Դեկտեմբեր 1942 ու կը տեղափոխուին այլուր:

Հայկական լեգէոններու կազմաւորումը

1941-ի ամռան գերմանական բանակը հասած էր արդէն Ղրիմի թերակղզին ու պաշարած էր Մեւաստապոլի մօտ Քերչ քաղաքը: Մեծամասնութեամբ ոչ-ռուս ազգութիւններէն բաղկացած սովետական բանակի այդ ճակատը ցաւօք խեղճօրէն զինասարքաւորուած էր ու այս պատճառով ալ հայազգի գերիներու թիւը, ներառեալ Կիւեի ճակատամարտը, Հոկտեմբերին հասաւ 15.000-ի:

1941ի վերջերը Բեռլինի եւ Վիեննայի մէջ գերիներու օգնութեան յանձնախումբեր ստեղծուեցան: Յունուարին Վիեննայէն, իսկ Մարտին նաեւ Սոֆիայէն հազուստեղէնէն զատ կանխիկ դրամ ալ ուղարկուեցաւ:

Սովետական ռազմագերիները համաձայն իրենց ազգային ծագումին երկու խումբերու բաժնուեցան: Կոնակնին "Ա" տառը կրողները ասիականներն (թուրք) էին: Սառնային պայմաններուն տակ ռազմագերիները չէին մատակարարուէր բաւարար ուտելիքով ու այսպէս կը պարտաւորէին միանալու նորաստեղծ լեգէոններուն:

Ըստ Հ. Իւթիւճեանի յուշատետրին Հայ ռազմագերիներէն Փետրուար 1942-ին կազմուած էին երեք գումարտակներ (Bataillon Nr. 809, 810 եւ 812), մօտ 3.000 զինուորներով: Ասոնք տեղաւորուած էին լեհաստանի Պուլաւի կոչուած վայրը, որը մօտ 65 քմ հեռու էր Ռադոմ քաղաքէն: Հայ լեգէոնականները կը կրէին գերմանական հագուստներ, իսկ թեւագարդ (քոքարդ) մը՝ Արմենիա մակագրով: Լեգէոններու կազմաւորումը ըստ պաշտօնական աղբիւրներու եղած է 1942 թ. Յուլիս ամսին:

Իբր գերմանահպատակ զինուորներ Բեռլինի Մուրատեան եղբայրք սերտ կապի մէջ էին "գրաւուած արեւելեան շրջաններու նախարարութեան" ու լեգէոնականներուն հետ: Այս երկուքը շարքային դաշնակցականներ չէին, այլ ենթակայ էին յիշեալ նախարարութեան:

Վերոյիշեալ երեք գումարտակներէն զատ կար նաեւ 916 հայերէ ու 41 գերմանացիներէ բաղկացող չորրորդ գումարդակ մը՝ թիւ 808, որ կազմուած էր Յուլիս 1942-ին: Նկատի առնելով, որ բազմաթիւ հայեր անցնելով Կարմիր Բանակի շարքը դասալիք դառնան,

գերման բանակի հրամանատարութիւնը Հոկտեմբեր 1942-ին լուծեց զայն ու վերածեց ճանապարհաշինութեան միաւորի մը:

Գումարտակ թիւ 809 կազմուած էր Օգոստոս 1942-ին ու կը բաղկանար 941 հայերէ եւ 45 գերմանացի զինուորներէ: Անոնք կը կռուէին Նալչիկ, Մոստոկ, Կուրբան եւ նոյեմբերին նաեւ Քերչ թերակղզին: Տարի մը անց, հոկտեմբեր 1943-ին կը տեղափոխուին Հոլլանդա, ապա Բելգիա: 1944-ի օգոստոսին այս գումարտակը մեծ կորուստներ ունեցաւ ու անմիջապէս յետոյ տարրալուծուեցաւ:

Գումարտակ թիւ 810-ի մասին քիչ տեղեկութիւններ կան. ան կազմուած էր նմանապէս Լեհաստան:

Գումարտակ թիւ 812 թեքնիկական գումարտակ մըն էր, կազմուած էր Փետրուար 1943-ին Պուլաւի (Ռադոմ քաղաքի մօտ) : Այս եւս տարի մը վերջ 1943 թ. Մարտ 10-ին տեղափոխուած է Հոլլանդա: Այս գումարտակը ունէր իր յատուկ հոգեւոր հովիւը, որուն մասնակցութեամբ հայկական եկեղեցական տօները կը տօնուէին, նոյնիսկ տեղի ունեցան մկրտութիւններ:

1943-ին եւս կազմուեցան հայկական հետեւագօրք (Infanterie) լեգէոններ 813., 814., 815., 816, որոնք կռուեցան Լեհաստանի մէջ:

Վերոյիշեալ գումարտակներէն զատ կային երեք հայկական զօրաբաժիններ (Division)՝

I/198 հայկական զօրաբաժին – Կազմուած է Ուկրաինա 1942 թ. Սեպտեմբերին, ուղարկուած է հարաւային Ֆրանսա, մանաւանդ Թուլոն քաղաքի պաշտպանութեան համար:

II/9 հայկական զօրաբաժին – Այս եւս կազմուած է Ուկրաինա 1942 թ. Սեպտեմբերին, ուղարկուած է հարաւային Ֆրանսա, մօտ Սան-Տրոպէ (Saint-Tropez) հսկելու համար ծովափնեայ շրջանները:

I/125 հայկական զօրաբաժին – Կազմուած էր Փետրուար 1943-ին Ուկրաինա: Կարճ ժամանակ յետոյ ուղարկուած է հարաւային Ֆրանսա, ուր Մարսէլ քաղաքի հիւսիսը գտնուող փոքր քաղաք Էկսանպրովանս (Aix-en-Provence) տեղաւորուած են:

Մասամբ դասալիքներու պատճառով, մասամբ ալ ՀՅԴ գործիչներու տարած քարոզչական աշխատանքով գերման բանակի հրամանատարութիւնը որոշեց հայկական լեգէոնները այլեւս ռուսական ճակատէն հեռացնել ու տեղափոխել արեւմուտք՝ Հարաւսլաւիա, Ալբանիա եւ Ֆրանսա: Հայ լեգէոնականներուն պարտականութիւն տրուեցաւ կամուրջներն ու երկաթուղիները պաշտպանելու: Ցաօք սրտի տեղոյն ազատամարտիկներու կողմէ բազմաթիւ հայեր սպանուեցան: Կային նաեւ հայեր, որոնք միացան այդ ազատամարտիկներուն:

Հայ Ազգային Խորհուրդ

15 Դեկտեմբեր 1942-ին Բեռլինի մեջ կը ստեղծուի Հայ Ազգային Խորհուրդ (**ARMENISCHES NATIONALES GREMIUM**) Գերմանիոյ արեւելեան նախարարութեան կից: Խորհուրդի նախագահ Դր. Արտաշէս Աբեղեան եւ անդամներէն զօրավար Նժդէհ կը ժամանեն Վիեննա 10 Յունուար 1943-ին: Ա. Յարութիւնեանցի բնակարանը տեղի ունեցող հանդիպումին ներկայ կ'ըլլան նաեւ Միխիթարեան միաբանութեան արքահայրն ու միաբան Հ. Պօղոս Էսաբալեանը:

Հիւրերը կարգ մը շփումներ կ'ունենան հոգեւոր հովիւին ու հայ համայնքի անդամներուն հետ, նաեւ Միխիթարեան վանքի մէջ գործաւորներուն հետ ու կը մեկնին Յունուար 15-ին:

Լեզնականներու այցելութիւնները

Մինչեւ Յունիս 1943 կարգ մը լեզնականներ այցելած են Վիեննա, մասնակցած են կիրակնօրեայ Ս. Պատարագներուն: Այս այցելութիւնները Հոգեւոր Հովիւին Ռադոմ կատարած այցելութենէն յետոյ (15-23 Յունիս 1943) վերածուեցան ամսուայ յաճախականութեան, ըստ որում մօտ 10 հայ լեզնականներուն իրաւունք տրուած էր այցելելու Վիեննա:

Ա. այցելութիւն (15-23 Յունիս 1943) ի Ռադոմ

Հոգեւոր Հովիւը Նուպար Վարդեանի ու Ալֆրետ Գարամանլեանի ընկերակցութեամբ կը մեկնի Լեհաստան, իրենց հետ վերցնելով լեզնականներուն համար պիտանի իրեր: Յաջորդ օրը կը հասնին Pulawy (Puławy), ուր կային երեք գումարտակներ, մօտ 3.000 հայ զինուորներով: Այս այցելութեան մանրամասնութիւններուն չեմ մտնար: Հետաքրքրական է, որ Ա. Գարամանլեան առանց մտահոգուելու այցելութենէն ֆիլմ կը վերցնէ: Նուպար Վարդեան կը պատմէ, թէ Բեռլինէն երկու հայեր թարգմանութիւն կ'ընէին (կարծեմ Մուրատեան Եղբայրքն են): Բայց քանի որ անոնք ռազմադաշտ մտնելու իրաւունք չունէին, գերման սպաներու եւ հայ զինուորներու միջեւ հաղորդակցութիւնը կը տուժէր եւ ի հետեւանք՝ սպաները կը ծեծէին հայերը: Ամսուն 22-ին տեղի կ'ունենայ 814 թ. գումարտակի երթման արարողութիւնը, ուր Հոգեւոր Հովիւը կը ճառախօսէ:

Յունիս 23-էն 25 Վիեննայի պատուիրակութիւնը կ'այցելէ Վարշաու, ուր կը հիւրասիրուին տեղւոյն հայերու կողմէ: Ուրբաթ առաւօտեան երկայնուղիով կը հասնին Վիեննա:

Բ. այցելութիւն (16-23 Յունիս 1943) ի Ռադոմ

Ըստ Հոգեւոր Հովիւի այս երկրորդ այցելութեան բուն նպատակն էր լեհաստանէն վերադառնալ առատ ուտելիքներով: Այս անգամ պատուիրակութիւնը չարժանանար

նոյն յարգանքի: Ա. Գարամանլեան կը յանձնէ այն ֆիլմը, զոր վերցուցած էր առաջին այցելութեան ընթացքին, շեշտելով, որ այդ պէտք է ցուցադրուի Բեռլին: Ֆիլմը ցոյց կը տրուի նախ Ռադոմ քաղաքի գերման զօրավարի եւ սպաներուն ներկայութեամբ: Պատուիրակութիւնը անգամ մը եւս կ'այցելէ Վարշաու ու կը վերադառնայ Ուրբաթ Յուլիս 23-ին Վիեննա:

Կեանքը երկու այցելութիւններէն յետոյ

Վերադարձէն յետոյ ամիսներ շարունակ հայ լեզունականներ կ'այցելէն Վիեննա, ներկայ կը գտնուին կիրակնօրեայ պատարագներուն, ոմանք նոյնիսկ կը ճառախօսեն:

Լեզունականները մասամբ իրենց ռազմաճակատային արձակուրդը վայելելու համար կու գային Վիեննա, մասամբ ալ իրենց ճամբուն դէպի Բալկան (Յունաստան, Հարաւսլավիա, Ալբանիա) կանգ կ'առնէին Վիեննա: Հոգեւոր Հովիւն ալ իր կարգին կ'այցելէ այն վիրաւորեալ լեզունականները, որոնք կը բուժուէին Վիեննա կմ շրջակայքը: Հ. Իւթիւճեան կը կազմակերպէ հանգանակութիւն Ամանորի ու Ս. Ծննդեան տօներու առթիւ:

1944-ի Ապրիլ-Մայիս ամիսներուն Վիեննայի մէջ կը սկսին օդային ռմբակոծութիւնները: Յունիսի սկիզբին հայկական լեզունի թիւ 810-ի հրամանատարը Ֆրանսա իր ճամբին Վիեննա կը հասնի իր գումարտակով ու կը տեղեկացնէ, թէ Ուկրանիոյ Չերկասսի քաղաքի պաշտպանութեան մասնակից գումարտակը գրեթէ կիսուած է զոհերու, կորսուածներու ու դասալիքներու պատճառով:

Պատուիրակութեան մը ընկերակցութեամբ Յունիս 9-ին Բեռլինէն կը ժամանէ հայ լեզունականներու ինսամակալ Ալֆրետ Մուրատեանը: Ան Հոգեւոր Հովիւնէն կը խնդրէ, որ հայոց եկեղեցիի մասին գրքոյկ մը պատրաստէ, բաժնելու համար լեզունականներուն ու հասարակութեան: Իսկ Միխիթարեան Միաբանութենէն ալ խոստում կը ստանայ՝ հիւանդ հայ լեզունականներուն օթեւան տրամադրելու:

Այդ օրերուն Շտայնինգեր անուն անձ մը կ'այցելէ մատուռ եւ կը տեղեկացնէ, թէ Բուլգարական գումարտակը Վարշաւայէն Ռադոմ կը տեղափոխուի, որոնց մէջ կան մօտ 300 հայեր:

6 Յուլիս 1944-ին Եդուարդ Փափագեան կը տեղեկացնէ, թէ 10 հայ երաժիշտներ Յուլիս 11-ին ՈՒՐԱՆԻԱ համերգ տալու են: Մոյն համերգին ներկայ էր նաեւ Զօրավար Դրօն, Հայ Ազգային Խորհուրդի անդամներէն գնդապետ Հ. Բաղտասարեանն ու Դ.

Դաւիթխանեանը: Երկրորդ համերգ մը տեղի կ'ունենայ Հիւբներ'ս Սալոնի մէջ ամսուն 13-ին, որուն համար կը կազմակերպուի հանգանակութիւն մը:

Գերմանացիներուն հետ համագործակցած յունահայեր գերման բանակի նահանջին զուգահեռ, հետզհետէ կը հասնին Վիեննա: Ոմանք նոյնիսկ գիշերած են Հոգեւոր Հովիւի քով:

Պատերազմի ավարտին ինչպիսի՞ ճակատագիր մը ունեցան հայ լեզուականները:

Բազմաթիւ զինուորներ ուզեցին վերադառնալ Հայաստան: Այն դասալիք հայերը, որոնք արժանի էին գնդակահարման, արտորուեցան Սիբիր, ուր մնացին մինչեւ Ստալինի մահը (1953): Նոյնպէս Սիբիր արտորուեցան բուլղարահայերն ու Ռումինահայերը, որոնք նացիներու հետ կը համագործակցէին: Զօրավար Դրօն ամերիկացիներու կողմէ ձեռքակալուեցաւ, ապա ազատ արձակուեցաւ (մանրամասնութեան համար տե՛ս համացանցը): Իսկ Բուլղարիա վերադարձող զօրավար Նժդեհը համայնավարերու դաւին զոհ գնաց ու Մոսկվա բանտարկուեցաւ: Կարճ մը Երեւան բանտ մնալէն յետոյ տեղափոխուեցաւ դարձեալ Մոսկվայէն 100 մղոն անդին Վլադիմիրի բանտը ուր 1955-ին մահացաւ:

Մխիթարեան Միաբանութիւնը եւ հայ-առաքելական համայնքի յարաբերութիւնը (1938-1945)

Իր 30-տարւայ ծառայութեան շրջանին Տէր Իւթիւճեան եւ հայ-առաքելական համայնքը համերաշխ յարաբերութիւն ունեցած են Մխիթարեան հայրերուն հետ: Առանձին դէպքեր ու արտայայտութիւններ զգալիօրէն չեն խանգարած այս համերաշխութիւնը:

Տէր Իւթիւճեան սովորութիւն ունէր ներկայ ըլլալու Դեկտեմբեր 25-ին, Ս. Զատկին ու Մխիթարեան Միաբանութեան հիմնադրութեան արարողութիւններուն ու սոնակատարութիւններուն: Մխիթարեաններն ալ իրենց հերթին կ'այցելէին Ս. Փրկիչ մատուռը, մանաւանդ Ամանորի ու Ս. Ծննդեան առթիւ:

Յիշեալ առիթներէն զատ Տէր Իւթիւճեան ի հարկին հիւանդատեսի կ'երթար հիւանդ վանականներուն ու մահուան պարագային ներկայ կ'ըլլար անոնց յուղարկաւորութեան: Մանաւանդ Սահակ-Մեսրոպ սօսին Տէր Իւթիւճեան կը շնորհաւորէր մխիթարեան արքահայրը, սերտօրէն կը համագործակցէր վանքի գրադարանապետի հետ՝ յանձնելով անոր օրաթերթեր կմ հայթայթելով պակաս թիւերը:

Վարդանանցի ինչպէս եւ Մշակոյթի Տօնի առթիւ մխիթարեան հայրերը Ս. Փրկիչ մատուռին մէջ բանախօսած ու ճառախօսած են: Օրինակ մը տալու համար նշենք 12 Հոկտեմբեր 1941-ին տեղի ունեցող Մշակոյթի Տօնը, ուր Հ. Պօղոս վրդ. Էսսաբալեան ճառախօսած է, ինչպէս եւ 12 Փետրուար 1942 ին Վարդանանց սօսին, ուր գեղանկարիչ Անդրէ Սերուկեանի "Անիի ակերակները" պատկերը աճորդի դրուած էր:

Փոխադարձ լուրեր եւ հրաւերներ կը տրուէր, երբ Աւստրիացի ինչպէս եւ արտասահմանեան հիւրերը կ'այցելէին Վիեննա: Նաեւ սովորութիւն կար հրաւիրելու կաթողիկէ կամ աւետարանական եկեղեցիներուն մէջ տեղի ունենալիք արարողութիւններուն:

Գնահատանքի արժանի է երկու հաստատություններու միասնական աջակցությունը Բ. Համաշխարհային պատերազմի տարիներուն՝ ի նպաստ Աւստրիա ժամանած հայ գործաւորներուն ու պատերազմի հայ փախստականներուն:

Պատերազմի հայազգի փախստականներ 1944-45

Գերման բանակի ձախողումներուն ու անոր յաջորդող նահանջի հետեւանքով փախստականներու ալիք մը կը ծագի: Մարտ 1944-ին սովետական բանակը կը գրաւէ Ուկրանիոյ հարաւային մեծ տարածքները, որուն հետեւանքով Ապրիլի վերջին գերման բանակը կը լքէ Ղրիմի թերակղզին:

Տէր Իւթիւճեանի յուշատետրերուն շնորհիւ հետաքրքրական տեղեկութիւններ կը ստանանք այն հայազգի փախստականներուն մասին, որոնք Աւստրիա ապաստան գտած են, կամ Աւստրիան գործածած են իբրեւ տարանցման (տրանզիտ) երկիր: 11 Մայիս 1944-ին ան կը գրէ, թէ մօտ 600 հայեր Օդեսայէն Աւստրիա հասած են: Իւթիւճեան շուտով իշխանութեան քով բարեխօսած է, որպէսզի այս փախստականները թեթեւ պարտատրեալ աշխատանք ստանան: Կարծեմ Օդեսսա անունի տակ Ուկրանիոյ հայ բոլոր փախստականներն են համախմբուած, որոնք կու գան Խարկովէն, Ռոստովէն ու Օդեսայէն: Բոլորն ալ նախնական շրջանին կը կրէին "OST" բազկանշանը: Անոնք տարածուած էին Աւստրիոյ զանազան քաղաքներուն մէջ: Քանի մը փախստականներ Տէր Հայրէն ուզած են "արիական փաստատուող"՝ տեսնելով թեթեւ աշխատանք ստանալու հնարաւորութիւնը: Այդ երեքը կը տեղեկացնեն, թէ կարգ մը հայեր կ'աշխատին Յիստերդորֆի նաֆթահորը:

Ըստ Կ. Փափազեանի այդ փախստականները Շտուտտգարտէն 90 քմ հարաւ-արեւմուտք գտնուող Ռոտտվայլի ճամբարը հաւաքուած են: Ամերիկեան զինուորներու ժամանումէն յետոյ հայազգի փախստականները խումբ առ խումբ (զանգուածային) ուղարկուած են Ամերիկա:

Կարելոր նշում մը ըրած է Տէր Իւթիւճեան, որով Վարշաւայի 600-էն աւելի հայ ընտանիքներ կ'ուզեն Վիեննա գալ: Այս հարցի շուրջ "Արեւելեան Նախարարութեան" աշխատակիցներէն Աբրահամեան եղբայրք Բեռլինէն Վիեննա կու գան, խորհրդակցելու համար Գեղամ Ամատունիի հետ:

Ռմբակոծումներուն հետեւանքով ժողովուրդը մասամբ անօթեւան է: Իշխանութիւնը կը բռնագրաւէ ոմանց բնակարանները կամ առանձին տուները, օրինակ Արմենակ Վարդեանի Հայլիզենշտատի վիլլան:

Մաս առ մաս Վարշաւայէն հայ ընտանիքներ կը հասնին Վիեննա: 26 Յուլիս 1944-ին 100 հայեր Վիեննա կու գան. մաս մը միսիթարեան վանքի մէջ, մաս մըն ալ հայ համայնքի անդամներուն քով կը պաստպարուին, յաւելեալ 11 հոգիներն ալ Ս. Փրկիչ մատրան մէջ: Տէր Իւթիւճեանի ջանքերով ուտելիքի կտրօններ կարելի եղած է ձեռքբերել: Երկրորդ խումբ մը կը սպասուի:

17 Օգոստոս 1944-ին 200 հայ փախստականներ կը մեկնին դեպի Շտուտտգարտ: Իւթիւճեան կը նշէ, թէ Միխիթարեան հայրերը մկրտած են փախստականներէն ոմանք, ուրիշներ նոյնիսկ պսակած են: Յաւալի մահ ունեցած է Ուկրանիայէն եկող Աւետիքով ընտանիքը, որուն հինգ անդամները նոյն օրը (27.10.1944) մահացան՝ քաղաքի կենտրոնի ոմբակոծման հետեւանքով:

Արդեօք Գերմանիա հասած հայ փախստականները պատերազմի աւարտին ո՞ր գաղթեցին: Յունուար 1946-ին Շտուտտգարտի մօտ գտնուող Կաննշտատի մէջ կային 3.000 հայեր: Միխիթարեան Հայր Միքայէլ Ակեան երկու անգամ այցելած ու զեկուցած է այս փախստականներու անտանելի առօրեային մասին:

Իր ծանօթ տարեգրքին մէջ Կարօ Գեւորգեան եւս կ'անդրադառնայ 3.000 – 4.0000 հայ փախստականներու մասին: Ամերիկահայ բարերար Ջորջ Մարտիկեան լսելով փախստականներու խեղճ վիճակը կը հիմնէ **ԱԼՉԱ** կազմակերպութիւնը: Օգտուելով ամերիկայի բանակի հետ իր ունեցած բարձրաստիճան կապերէն, կը յաջողի Գերմանիայէն, Աւստրիայէն ու Բուլղարիայէն մօտ 5.000 հայ փախստականներ տեղափոխել Ամերիկա: Այս թուի վրայ կ'աւելնան Ռոմանիայէն ու Բուլղարիայէն մօտ 2.500 փախստականներ:

Ըստ Տէր Իւթիւճեանի, Մեպտեմբեր 1948-ին դեռ կան Աւստրիա գտնուող հայեր, որոնք կը սպասեն իրենց վիզային: Փարիզ լոյս տեսնող ՅԱՌԱՋ թերթի մէջ ալ հայ փախստականներու մասին տեղեկութիւններ կը տրուին, որուն համաձայն Լինցի մէջ ապրող հայ փախստականներու կացութիւնը աւելի տանելի կը թուի քան Սալցբուրգինը: Տէր Իւթիւճեան ոմանց յանձնարարագիր կու տայ Արժանտին գաղթելու: Իսկ Լինց քաղաքի մէջ սպասող մօտ 60 հայերն ալ կը մեկնին դեպի Վենեզուելա եւ Չիլէ:

Սալցբուրգի ճամբարի հայոց խօսնակը ճամբարի մէջ տիրող կացութիւնը սապէս կը ներկայացնէ՝ երբ ամիսը մէկ հարաւային ամերիկայի եւ այլ երկիրներու ներկայացուցիչները կամ հիւպատոսները կ'այցելէին ճամբարը, այնտեղ կը գոյանար մտեղենի շուկայի պատկեր մը, ուր մսավաճառը այս կամ այն մսացու ոչխարը կը զատէ: Այդ մարդիք մասնաւորապէս հետաքրքրուած էին երիտասարդներուն, մասնագէտներուն ու արհեստավարժ գործատրներուն: Շրջապատուած լեզուազէտ, իրաւազէտ հրեայ, ռուս եւ այլ ազգերու պատկան մարդոցմէ, անոնք կը ներկայացնէին ցանկեր ու հարցաթերթիկներ, որոնք "Փախստականաց Միջազգային Կազմակերպութեան" կողմէ նախապէս պատրաստուած էին: Երբեմն այն ցանկերու մէջ կը հանդիպէիր նաեւ հայու մը անունին:"

1950-ին դեռ խօսք կայ Միւնխենի ճամբարի փակման մասին, ուր մօտ 90 փախստականներ կային, որոնցմէ 15-ը այս ամիս Ամերիկա կը մեկնին: Մօտ 10 հոգիներ կ'ուզեն Միւնխեն մնալ: Մնացեալները մասամբ հիւանդներ են, մասամբ ալ անոնք, որոնք խնդիր ունեցած են ոստիկանութեան հետ.